ԿԱՐԼԵՆ ՄԱՏԻՆՅԱՆ

ՊԱՍԿԱԼԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԹՈՄԱՍ ԲԵՐՆՀԱՐԴԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ավստրիական գրականությունը XX դարի երկրորդ կեսում, շարունակելով դարասկզբի լավագույն ավանդույթները (Կաֆկա, Մուզիլ, Վերվել), տալիս է այնպիսի անվանի գրողներ, ինչպիսիք են Ի.Բախմանը, Պ.Հանդկեն, Վ.Բաուերը և այլն: Սակայն խոշորագույն գրողը, որը բնորոշում է այդ ժամանակաշրջանի ավստրիական գրականության դեմքը՝ Թոմաս Բերնհարդն է (1931-1989): Այս գրողն իր վեպերով և դրամաներով համարվում է ոչ միայն Ավստրիայի, այլև ԳՖՀ-ի խոշորագույն ժամանակակից գրողներից մեկը:

Մոտ 25 տարի է տևել հեղինակի ստեղծագործական ուղին, որի ընթացքում նա հասցրել է գրել տասից ավելի վեպեր ու պատմվածքներ, և մոտ երկու տասնյակ պիեսներ: Գրական փառքը Բերնհարդին բերեցին նրա առաջին երկու վեպերը՝ «Սառնամանիք» (1963թ.) և «Խանգարվածություն» (1967թ.), ինչպես նաև 70-80-ականներին գրված դրամատիկ գործերը՝ «Տոն Բորիսի համար», «Որսորդական ընկերակցություն», «Սովորության ուժը», «Նախագահ», «Հռչակավորները» և այլն: Նրա աշխարհայացքի և գեղարվեստական աշխարհի ձևավորման գործում կարևորագույն և վճռորոշ դեր է խաղացել ֆրանսիացի մեծ մտածող և գիտնական Բլեզ Պասկալի փիլիսոփայությունը:

Հեղինակը դա ոչ միայն չի թաքցնում, այլ հակառակը՝ ամեն կերպ ընդգծում է այդ հոգեհարազատությունը: Պասկալի անունը կամ նրա մտքերը այսպես թե այնպես առկա են Բերնհարդի ամբողջ ստեղծագործության մեջ՝ վաղ շրջանից մինչև կյանքի վերջին օրերը: «Շփման» եզրերն անչափ լայն են. լեզվի յուրօրինակ ըմբռնումից մինչև մարդկային կյանքի ողբերգական էության բացահայտումը:

Բերնհարդը իր ստեղծագործության մեջ առաջին հերթին փորձում է ընկալել մարդու էության առեղծվածը, նրա ֆենոմենը: Այս հարցում նա ամբողջապես հենվում է Պասկալի դրույթների վրա: Բերնհարդի համարյա բոլոր հերոսների ներաշխարհում մշպատես պայքար է գնում հոգու և մարմնի միջև: Պասկալի այն միտքը, որ մարդը չի կարող ճանաչել ինքն իրեն, նա բացատրում է նրանով, որ մարդն անընդունակ է հասկանալ, թե «ինչպես կարող է նյութեղեն մարմինը միաձուլվել հոգու հետ»:[1]

Մարդու այս հակասական էությունն ավելի ամբողջական ներկայացնելու համար Բերնհարդը «դիահերձում է» իր հերոսների ներաշխարհը: Համաձայնելով Պասկալի այն մտքի հետ, որ մարդու ուժն իր բանականության մեջ է, Բերնհարդը միևնույն ժամանակ ցույց է տալիս, որ բանականությունն ինքնին տառապում է անհաղթահարելի ներքին հակասությունից: Այն թույլ է տալիս գիտակցել, որ ինքը շրջապատված է առարկաներով և երևույթներով, և միևնույն ժամանակ նա շատ թույլ է, որովհետև անկարող է հասկանալ այդ երևույթների պատճառը և իրերի էությունը: Իսկ անզոր է, որովհետև մարդուն շրջապատող աշխարհը միատարր է. այն կամ անբողջապես հոգևոր է, կամ ամբողջապես նյութական այն դեպքում, երբ նա իրենից ներկայացնում է այս երկու հակասական մեծությունների միաձուլում: Ըստ Պասկալի, մարդն անկարող է ճանաչել ո՛չ շրջապատող աշխարհը և ո՛չ էլ ինքն իրեն, քանզի դրանցում ամփոփված են անսահման մեծը և անսահման փոքրը, և որքան էլ նա փորձի մոտենալ այդ անսահմանությանը, միևնույն է, չի հասնի վերջնագծին և մշտապես պետք է խարխափի այս երկու անսահմանությունների միջև: Միևնույն ժամանակ մարդու երկփեղկվածությունը, նրանում հոգևորի ու նյութականի առկայությունը, որոնք մարդու մեջ մշտապես պայքար են մղում միմյանց դեմ, կանխորոշել է նրա թուլությունը և դժբախտ լինելը: Պասկալը գրում է. «...Միևնույն ժամանակ մենք միայնակ չենք. մեր մեջ է երկու հակադիր

---

[1] Блез Паскаль, БВЛ, Москва, Худ. лит. 1974, с.123.

Այս գրքից մեջբերումներ կատարելիս փակագծերում կտրվի միայն էջը:

բևեռ՝ մարմինն ու հոգին: Այն, ինչ մեր մեջ մտածում է, դա հոգին է, հոգևորը, իսկ եթե ենթադրենք, որ հոգի չկա և մենք ամբողջապես մարմնական ենք, ապա անհեթեթ կլիներ ենթադրել, որ մենք կարող ենք հասնել ինքնաճանաչման (125): Ներքին հակասականության մեկ այլ աղբյուր է, ըստ Բերնհարդի, կրքերի և գիտակցության միջև գոյություն ունեցող երկպառակությունը: Ընդունելով, որ կիրքը՝ մարմնական է, իսկ գիտակցությունը՝ հոգևոր, Բերնհարդը դրանց անհամատեղելիության մեջ է տեսնում մարդու դժբախտության և տառապանքների աղբյուներից մեկը: Դրանով իսկ նա հաստատում է Պասկալի այն միտքը, որ մարդը զերծ կլիներ այդ տառապանքներից «եթե ունենար միայն գիտակցություն կամ միայն կրքեր», սակայն «օժտված լինելով և՛ գիտակցությամբ և՛ կրքերով, նա անընդհատ պայքարում է ինքն իր հետ, քանի որ հաշտվում է գիտակցության հետ միայն այն ժամանակ, երբ պայքարում է կրքերի դեմ և հակառակը» (153): Այդ պատճառով Բերնհարդը գտնում է, որ մարդու ձգտումը ներդաշնակության ոչ միայն անիրական է, այլև՝ ծիծաղելի: Նա, ինչպես և Պասկալը, դիտարկում է մարդուն՝ որպես մի միջանկյալ էակ, «կենդանու» և «հրեշտակի» միջև և նրա դժբախտությունը տեսնում է առաջին հերթին նաև այն բանում, որ «որքան շատ է նա (մարդը–Կ.Մ.) ձգտում նմանվել հրեշտակի, այնքան շատ է նմանվում կենդանու» (138): Սա է պատճառը, որ Բերնհարդը մարդու մեջ առաջին հերթին կենդանականն է տեսնում, հաճախ նաև գազանայինը՝ առօրյա կյանքի բռնության և դաժանության սկիզբը: Շտրաուխը «Սառնամանիք» վեպում ասում է. «Սա է ժողովուրդը, սրանք են մարդիկ, որոնք միմյանց հրահրում են իրար դեմ և միմյանց խոցում այն տեղում, ուր խոցելի բան են գտնում:[2] Բերնհարդը բոլոր մարդկանց միանշանակ համարում է արատավոր: Այստեղից էլ այն բացատրությունը, թե ինչու են նրա գլխավոր կերպարների մեծ մասը հաշմանդամ: Ֆիզիկական արատը հեղինակի համար հոգևոր արատի ակնհայտ խորհրդանիշն է: Այդ կապը Բերնհարդը զուգահեռում է Պասկալի առաջ քաշած ֆիզիկական և մտավոր արատների միջև եղած կապի հետ: Վերջինիս մոտ դա ներկայացված է հետևյալ կերպ. «Ինչու՞ մեզ չի զայրացնում ոտքից կաղը, սակայն զայրացնում է նա, ով կաղ է մտքից: Դա

---

[2] Bernhard Th., Frost, Frankfurt a.M., 1994, S.247.

շատ պարզ է. կաղը խոստովանում է, որ մենք կաղ չենք, իսկ ապուշը գտնում է, որ մեր ուղեղն է արատավոր: Այդ իսկ պատճառով մենք նրան չենք խղճում, հակառակը՝ չարություն և բարկություն ունենք նրա հանդեպ» (124): Այստեղից կարելի է եզրակացնել, որ մտավոր և հոգևոր արատը մարդու մեջ է և շատ հաճախ քողարկված: Այդ պատճառով Բերնհարդը մարդկային արատը ավելի պարզորոշ «բացահայտելու» նպատակով պատկերում է դրա ֆիզիկական, «արտաքին» տեսքը: Սակայն, ի տարբերություն Պասկալի նկարագրած մարդկային տիպի, Բերնհարդի հերոսներն ընդունում են մարդու արատավորության փաստը: Աշխարհի Բարեփոխիչը նույնանուն պիեսում, Բժիշկը «Տգետը և Խելագարը» պիեսում ոչ միայն հաստատում են դա, այլև փորձում պատկերել դրա առաջացման մեխանիզմը և դրա «տրամաբանական կապը» մահվան գաղափարի հետ: Մարդն ըստ հեղինակի, արատավոր է թեկուզ միայն այնքանով, որ նա «հավատում է, որ կարող է հաղթահարել ամեն ինչ», որ նա գերագնահատում է իր կարողությունները, իր ինչ լինելը: Այսինքն Բերնհարդը մեզ սերտորեն մոտեցնում է Պասկալի այն մտքին, որ «մարդն ընդամենը եղեգ է, բնության ամենաթույլ էակը, սակայն նա մտածող եղեգ է: Նրան ոչնչացնելու համար ողջ Տիեզերքի օգնության կարիքը չկա, բավական է փչի քամին, կամ բավական է մի կաթիլ ջուր...» և որ «մեզ կարող է սպանել ցանկացած մի չնչին բու» (347): Մարդկային փխրուն և երերուն ֆիզիկական էությունը հաստատում է իր սեփական օրինակի վրա Աշխարհի Բարեփոխիչը. «Ծիծաղելի է, որ ես վերջ ի վերջո մահանալու եմ մի միջանցիկ քամուց» (II, 134):

Այն փաստը, որ Բերնհարդը ապրել է «կյանքի և մահվան մշտական հարևանությամբ», իր դրոշմն է թողել նրա պիեսների մեծ մասի վրա, ուր մահը կրնկակոխ հետևում է նրա բոլոր հերոսներին: «Կյանքը՝ պահմտոցի է,- ասում է Աշխարհի Բարեփոխիչը,- երբ մեկը ավելի շուտ, մյուսն՝ ավելի ուշ վազում է դեպի մահ»:

Ոչ պակաս պատկերավոր էր ներկայացված այդ միտքը նաև Պասկալի մոտ. «Պատկերացրեք, որ ձեր բոլորի պատուհանների դիմաց կանգնած են մահվան դատապարտված բազմաթիվ մարդիկ, ուր ամեն օր բոլորի աչքի առաջ սպանում են նրանցից մեկին և մնացած բոլորը, հասկանալով, որ իրենք արժանանալու են միևնույն ճակատագրին, ողբով ու հուսահատությամբ նայում

են միմյանց ու սպասում իրենց հերթին: Այսպիսին է մարդկային գոյության պատկերը» (150):

Բերնհարդի հերոսները որպես կանոն ստատիկ են, իսկ պիեսների մեծ մասը՝ զուրկ գործողությունից, քանի որ գործողությունն, ըստ հեղինակի, անիմաստ է այն պարզ պատճառով, որ անհեթեթ մահվան անխուսափելիության առջև յուրաքանչյուր գործողություն նույնքան անհեթեթ և անիմաստ է: Գրողը՝ «Որսորդական ընկերակցություն» պիեսում հետևյալ կերպ է բացահայտում և հիմնավորում այդ ստատիկ վիճակը. «Երբ մենք նայում ենք որևէ մարդու, միևնույն է թե ում, նրանում տեսնում ենք մեռնողի: Երբ արթնանում ենք՝ դատապարտված ենք անշարժության, հասկանու՞մ եք: Մենք բոլորս մահացած ենք, ամեն ինչը մեռած է, ամեն ինչը մեր մեջ մեռած է» (I, 193):

Բերնհարդի մոտ մահը միշտ կապված է անելանելի ողբերգության հետ: Բայց եթե Պասկալի մոտ այդ ողբերգության կողքին կա դրա փիլիսոփայական ընկալումը, դրա հետ համակերպվելը, հաշտվելը, ապա Բերնհարդի մոտ՝ դա անվերջ այրունահոսող վերք է:

Աննրդաշնակությունը և քաոսը Բերնհարդը տեսնում է ոչ միայն մարդկային հասարակության մեջ, այլև՝ ի տարբերություն ռոմանտիկների, նաև շրջապատող բնության մեջ: Նրա հերոսների խանգարված հոգեվիճակը, «Ներքին քաոսը»՝ դրա արտացոլումն է: Նա այն համոզմունքին է, որ քաոսը երբեք չի կարող ներդաշնակ տեսք ստանալ, նման տրանսֆորմացիայի գաղափարն անգամ ծիծաղելի է: Բերնհարդն ընդգծում է, որ մարդը ի զորու չէ հաղթահարել ո՛չ արտաքին և ո՛չ էլ ներքին քաոսը, նա չի կարող նաև հաղթել մահին, քանի որ ինքն իրեն չի կարող օգնել և առավել ևս ուրիշները՝ իր նմաններին: Իր այդ մտքի արձագանքը գտնում ենք թե՛ Պասկալի և թե՛ Նովալիսի մոտ: Վերջինը նշում է. «Բարձրագույն ցավի ժամանակ տեղի է ունենում զգացողության խանգառում: Հոգին կեղեքում է ինքն իրեն: Այստեղից էլ՝ մահացու սառնությունը, որից բխում է ազատ մտքի ուժը»:[3] Նովալիսը գտնում է, որ «մարդը որպես կործանարար ուժ, կանգնած է միայնակ: Նա

---

[3] Novalis, Schriften, Bd.3, Stuttgart, 1968, S.414.

կապված չէ մահացած աշխարհի հետ և աստիճանաբար քայքայում և կործանում է ինքն իրեն»:[4]

Այս գաղափարը գալիս է դեռևս Պասկալից, որը գրում էր. «Որքան անհեթեթ ենք մենք՝ մեր նմանների մեջ հենարան գտնելու ձգտմամբ: Որքան խղճուկ, նույնքան էլ անուժ, ինչպես մենք, նրանք մեզ չեն օգնի. իր մահվան ժամին մարդը միայնակ է» (211):

Շտրաուխը Բերնհարդի «Սառնամանիքում» գտնում է, որ մարդը պետք է հետևի իրեն, որպեսզի չապրի ավելի շատ, քան կարող է. միևնույն է կյանքը մի դատավարություն է, ուր միշտ պարտվում ես՝ ինչ էլ անես, ով էլ լինես»:

Ամենը որոշված է նախօրոք, նախքան մարդու լույս աշխարհ գալը: Մարդու ողջ գոյությունը դա լոկ մահվան նախապատրաստությունն է. «Ձեր մտքով չի՞ անցել, որ մարդիկ բնակեցնում են գերեզմանները,- հարցնում է Շտրաուխը ուսանողին,- որ մեծ քաղաքները մեծ գերեզմաններ են, իսկ փոքրերը՝ փոքր: Մահճակալը դագաղ է, հագուստը՝ պատրանք: Ամեն ինչ պարզապես մահանալ սովորելու փորձեր են»:[5]

Եթե Նովալիսի մոտ մահվան հարցը՝ երկու կողմ ունեցող «մեդալ է»,ապա Բերնհարդի մոտ այն ունի միայն մեկ կողմ: Այսպես, Նովալիսը գրում է. «Կյանքը մահվան սկիզբն է», մեկ այլ տեղ՝ «Կյանքը հանուն մահվան է: Մահը միևնույն ժամանակ վերջ է և սկիզբ, բաժանումն ու կապը ինքն իր հետ»:[6] Բերնհարդի Շտրաուխը հակառակը, ընդգծում է այդ կապի երկրորդ մասը. այն, որ սկիզբը՝ հենց վերջ է և որ կյանքը ոչ այլ ինչ է, քան «դեպի մահը տանող միակ գնացքը»: Այս ամենի հետևանքով մարդ արարածը ի ծնե դժբախտ է, իսկ նրա կյանքը՝ անիմաստ և անընմբռնելի: Բերնհարդի մոտ մահը՝ անվերադարձ կործանում է, մինչդեռ Նովալիսի մոտ մահվան գաղափարը ավելի մոտ է պասկալյան և, ինչու չէ, նաև քրիստոնեական ավանդույթներին: Ըստ նրա, հիվանդությունը և տառապանքը՝ մի փուլ է դեպի ավելի արժանավայել գոյությունը տանող ճանապարհին. «Մահը՝ հաղթանակ է ինքդ քո հանդեպ, որն

[4] Novalis, S.411.
[5] Bernhard Th., Frost, S.167.
[6] Novalis, S.417.

ինչպես ամեն մի հաղթանակ, ստեղծում է գոյության մի նոր, ավելի թեթև ձև»:[7] Պասկալն էլ ավելի լայն ընդհանրացնում է տալիս այս գաղափարին. «Մահը՝ բոլոր մարդկանց համընդհանուր երջանկությունն է (167): Նմանատիպ մոտեցում ունեն ռոմանտիկները և, հատկապես, Նովալիսը մթության հարցին՝ «գոյության գիշերային կողմի, որը հաճախ ներկայացնում են ռոմանտիկներն իրենց ստեղծագործություններում, պարունակելով «ավելի բարձր գոյածևի նախապայման»:[8] Առանձնակի տեղ են զբաղեցնում Բերնհարդի և Պասկալի աշխարհընկալման մեջ մահվան և մթության, մահվան ու ցրտի հասկացությունների զուգակցումները: Այս հասկացությունները երկուսի մոտ էլ բազմաշերտ են և բազմիմաստ: Քննադատներից մեկը, ընդգծելով «մթության» խոսակցության կարևորությունը Բերնհարդի գեղարվեստական համակարգում, Բերնհարդին նվիրած իր գրքի համար որպես վերնագիր է վերցրել հեղինակի պիեսներից մեկի բնաբանը. «Մթության մեջ է ամեն ինչը պարզ դառնում»:[9] Այս դեպքում սա այն ունիվերսալ «բանալին է», որը «բացում է» մուտքը դեպի այդ հասկացության բոլոր շերտերն ու իմաստները:

Բերնհարդը մութը համեմատում է գրքի էջերի հետ: Ինքնակենսագրական «Երեք օր» գրքում հանդիպում ենք հետևյալ համեմատությանը. «Մարդ գրքի էջերը պետք է պատկերացնի լիովին մութ: Եվ հանկարծ խոսքը փայլատակում է և դրանով իսկ ձեռք բերում իր պարզությունը և գերպարզությունը: Դա է արվեստի այն միջոցը, որ ես կիրառել եմ ի սկզբանե: Եվ երբ որևէ մեկը բացում է իմ ստեղծագործությունները, նա պետք է պատկերացնի, որ ինքը գտնվում է թատրոնում և առաջին իսկ էջից ինձ հետ միասին բացում է վարագույրը: Երևում է վերնագիրը, հետո՝ համատարած մթություն, ապա դանդաղ մթության միջից դուրս են գալիս բառերը, որոնք աստիճանաբար, գործողության արտաքին և ներքին իմաստին համապատասխան, դառնում են առավել պարզ ու հստակ ...:[10] «Մթության» մյուս կողմը մարդու կյանքի իմաստի, նպատակի

---

[7] Novalis, S.441
[8] Novalis, S.414
[9] Bernhard Th., Stuecke In 4 Baenden, Frankfurt a.M., 1988, Bd. III, S.129
[10] Bernhard Th., Frost, S.161

կամ երջանկության որոնումների անհեթեթ լինելն է, դրանց վերջնական արդյունքի կանխորոշված լինելը: Այն, ինչ Պասկալը ասում է երջանկության մասին, հավասարաչափ վերաբերում են նաև կյանքի իմաստին և նպատակին. «Մահը, որ անտեսանելի է արտաքնապես, բայց թաքնված է ցանկացած երևույթի խորքում՝ ամենածանրակշիռ հիմնավորումն է իրական երջանկության անհնարինության»:[19] Նա համոզված է, որ մարդիկ զգում են, թե որքան անիմաստ են իրենց նպատակներն ու ցանկությունները, «սակայն չեն հասկանում, թե որքան խղճուկ են իրենց երազանքները» (169):

Բերնհարդն իր հերթին գտնում է, որ նպատակը նման է հորիզոնին. այն մեզնից հեռանում է ճիշտ այնքանով, որքանով որ մոտենում ենք դրան: Դա մի «տեսիլք է», «ուրվական», որն իսկույն անհետանում է, երբ փորձում ենք շոշոփել այն: «Նպատակին հասած» պիեսում Մայրն այսպես է արտահայտվում նպատակի պատրանքի մասին. «Բայց երբ մենք արդեն հասնում ենք նպատակին, տեսնում ենք, որ ամեն ինչ կարծես շրջված է» (III, 379): Նույն այդ միտքն ավելի դիպուկ է արտահայտում Աշխարհի Բարեփոխիչը. «Սկզբից մենք ամեն ինչ անում ենք հանուն մեր նպատակի, իսկ հետո զզվում ենք՝ հասնելով դրան: Երբ արթնանում ենք հռչակավոր դարձած, այն, ինչի մասին երազել ենք տարիներ շարունակ, հանկարծ մեզ սարսափեցնում է» (III, 161): Այս ամենը կարելի է հեշտությամբ ի մի բերել Պասկալի մեկ լակոնիկ արտահայտությամբ. «Նա ով հասնում է նպատակին,մահացու դժբախտ է» (123):

Կյանքի աննպատակ և անիմաստ «մթությունից» բխում է նաև մարդկային գոյի «մթությունը»: Կյանքն այս դեպքում նման է մի թունելի, որի վերջում լույսի հույս անգամ չկա. միայն՝ մի մութ փակուղի, ուր մարդուն բերում է ճակատագրի «միակողմանի ճանապարհը»: «Մթությունը», որը Բերնհարդի համար գոյության ավարտի միստիկ գաղափարն է, անցումն է դեպի համընդհանուր անգոյության: «Իրական և երևակայական մթություն» հասկացությունների տարբեր շերտերը դասակարգվում են վերջնական «մարման» հեռանկարով: Պասկալը դա կապում է մարդու կողմից աշխարհը ճանաչելու անկարողության հետ: Նա զարգացնում է այն միտքը, որ թեև տպավորություն է ստեղծվում, թե մարդն ուսումնասիրում է աշխարհը, փորձում «բացահայտել» այն, իրականում նա ոչ թե ուսումնասիրող է, այլ

ուսումնասիրվողը: Քանզի նա մի չնչին, աննշան մասնիկն է աշխարհի, մի մասը չի կարող հասկանալ կամ առավել ևս բացահայտել ամբողջը: Այս իսկ պատճառով, ասում է Պասկալը, մարդն անվերջ փնտրում է իր տեղն ու դերը աշխարհում և չի գտնում: Բայց միևնույն ժամանակ մարդկային բնությունը թույլ չի տալիս նրան հրաժարվել իր այդ անիմաստ ձգտումից և նա դարեր ի վեր «անզոր խարխափում է անհասկանալիի ու անընմբռնելիի անհույս խավարում» (109): Շտրաուխը խոստովանում է, որ իր մտքի և երևակայության աշխատանքը հնարավոր է դառնում միայն բացարձակ մթության մեջ: Սակայն մենք տեսնում ենք, որ այդ պրոցեսը բերում է այն բանին, որ նրա մտքերի տրամաբանական կապն աստիճանաբար վերանում է. «Ինչպե՞ս ես դուրս գամ մթությունից: Գլուխս մթության մեջ մտցրած և մթության հետ սերտորեն կապված, ես միշտ փորձել եմ ինձնից վանել մթությունը...»:[11] Եվ այդ նույն Շտրաուխը, որը Բերնհարդի ստեղծագործության սկզբում մեզ ներկայանում է որպես աշխարհից կտրված և ասկետիկ կյանքով ապրող մի անձ, որը կարդում է «Պասկալ, միայն ու միայն Պասկալ» ստեղծագործության վերջում՝ մահվան շեմին խոստովանում է. «Ժամերը գնալով դանդաղում են և գնալով ինձ համար դժվարանում է գիշերները լուսացնել: Այլևս իմ Պասկալն էլ չեմ կարողանում կարդալ: Ոչ մի բառ, ոչինչ... (321):

---

[11] Bernhard Th., Frost, S.43.